ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի (Բացման նիստի արձանագրություն)

ք. Երևան *06.11.2019թ.*
Ժամը՝ 14:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Անահիտ Մալխասյան*

Անդամներ՝ *Մանուկ Սահակյան*

Դավիթ Խաչատրյան

Լևոն Մուրադյան

Մովսես Ասրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Հասմիկ Ղազարյան*

Օրակարգ՝

1. Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2019 թվականի կարիքների բավարարման համար՝ **համակարգչային տեխնիկայի** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/12»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2019 թվականի նոյեմբերի 06-ին, ժամը 12:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	**Մասնակցի անվանումը**	**Էլ. հասցե**
1	«Ինո - Թեքնոլոջի» ՆՊԸ	info@itech.am
2	«Կոմպմարկետ» ՍՊԸ	info@comp.am
3	«Վանդիստ» ՍՊԸ	Van_muradyan@yahoo.com

4	«ՆովաԹրեյդ» ՍՊԸ	NovaTream@gmail.com
5	«Սեգ» ՍՊԸ	Seg_tender@mail.ru
6	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ	tender@dgcomp.am
7	«Միկրորինգ» ՍՊԸ	microring@arminco.com

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 «Ինո - Թեքնոլոջի» ՍՊԸ, «Կոմպմարկետ» ՍՊԸ, «Վանդիստ» ՍՊԸ, «ՆովաԹրեյդ» ՍՊԸ, «Սեգ» ՍՊԸ, «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ և «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Բոլոր մասնակիցները ներկայացրել են գնային առաջարկներ, ինքնարժեքի հաշվարկներ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝

	ՀՀ պետ. բյուջեով նախատեսված գինը	Չ/Բ	Առաջարկված գինը		
			Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուրը
«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ	741000	1	578300	115660	693960
«Կոմպմարկետ» ՍՊԸ	741000	1	588000	117600	705600

«Ինո - Թեքնոլոջի» ՍՊԸ	741000	1	591750	118350	710100
«Վանդիստ» ՍՊԸ	741000	1	674500	134900	809400
«Սեգ» ՍՊԸ	741000	1	735000	-	735000
«Վանդիստ» ՍՊԸ	2396100	2	3494050	698810	4192860
«Միկրորինգ» ՍՊԸ	198000	4	161500	32300	193800
«Սեգ» ՍՊԸ	198000	4	198000	-	198000
«ՆովաԹրեյդ» ՍՊԸ	400000	5	299000	-	299000
«Սեգ» ՍՊԸ	400000	5	390000	-	390000
«Միկրորինգ» ՍՊԸ	139500	6	112250	22450	134700
«Ինո - Թեքնոլոջի» ՍՊԸ	139500	6	114750	22950	137700

6. Տվյալներ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների՝ հիմք ընդունելով ներկայացրած ամենացածր գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-2019/12» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել **«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ**-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած Իսկ մասնակից համարել **«Միկրորինգ» ՍՊԸ**-ին, 5-րդ չափաբաժնով՝ **«ՆովաԹրեյդ» ՍՊԸ**-ին:

6.2 2-րդ չափաբաժնով միակ հայտ ներկայացրած մասնակից **«Վանդիստ» ՍՊԸ**-ին 7.11.2019թ. ժամը 16:00 հրավիրել Ծառայություն՝ գնի շուրջ բանակցությունների, հաշվի առնելով այն փաստը, որ նրա կողմից առաջարկվել է նախահաշվայինը գերազանցող գին:

6.3 Բանակցությունների արդյունքում մասնակիցը հրաժարվեց գին իջեցնել: Արդյունքում , հանձնաժողովը որոշեց.

2-րդ և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝

2-ը՝ առաջարկված գնի նախահաշվային գինը գերազանցելու,

3-ը՝ հայտ ներկայացրած մասնակից չլինելու պատճառով:

6.3 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով /Lena_Najaryan@taxservice.am (հեռ. 060-54-49-71), karine_sargsyan@taxservice.am, էլեկտրոնային փոստի հասցեներին /ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկը և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

6.4 Մասնակիցներին ծանուցել մրցույթի արդյունքները և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից պահանջել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7. **Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի,օրվա և ժամի վերաբերյալ

8.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ե) պարբերության համապատասխան՝ հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ 2019 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 16:00-ին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ա. Մալխասյան*

Անդամներ՝ ---------- *Մ. Սահակյան*

---------- *Դ. Խաչատրյան*

---------- *Լ. Մուրադյան*

---------- *Մ. Ասրյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- *Հ. Ղազարյան*